

**«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական
համալսարան» հիմնադրամի**

գիտական խորհրդի 2019 թվականի դեկտեմբերի 26-ի նիստում

Խորհրդի նախագահ՝ ~~Ե. Սերոբյան~~



Հ Ա Յ Ե Յ Ա Կ Ա Ր Գ

**«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ**

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) հնգամյա ռազմավարական ծրագիրը սահմանել է այն հիմնական ուղղությունները, որոնց հետևելու է Համալսարանը երկարաժամկետ հեռանկարում՝ իր առաքելությունը և հիմնական ռազմավարական նպատակներն իրականացնելու համար՝ տրամադրելով որակյալ ծառայություններ:

Այդ ռազմավարական նպատակներին հասնելու համատեքստում կարևորվում է արդյունավետ և որակի ապահովման գործուն համակարգի ստեղծման անհրաժեշտությունը:

2. Սույն հայեցակարգը սահմանում է Համալսարանում որակի կառավարման, ապահովման, հավաստման, մշտադիտարկման շրջանակը՝ ընդհանուր պահանջները և սկզբունքները, ինչպես նաև վերջինիս կազմակերպական կառուցվածքը:

3. Համալսարանն իր առաքելության իրագործման և որակի ներքին ապահովման համար մշակում ու հաստատում է քաղաքականություն և ընթացակարգերի մի ամբողջություն՝ Որակի ապահովման համակարգ:

4. Որակի ապահովման համակարգը բաղկացած է մի քանի փոխկապակցված մասերից:

5. Համաձայն եվրոպական չափորոշիչների և ուղենիշների՝ Համալսարանի որակի ներքին ապահովման համակարգը պետք է պարունակի հետևյալ յոթ հիմնական կառուցամասերը.

- 1) որակի ապահովման քաղաքականություն և համապատասխան ընթացակարգեր

ու չափորոշիչներ,

2) ծրագրերի և որակավորումների հաստատման, ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման պաշտոնական ընթացակարգեր,

3) սովորողների գնահատման հետևողականորեն կիրառվող և հրապարակված չափանիշներ, կարգեր և ընթացակարգեր,

4) դասախոսական կազմի կարողությունների գնահատման թափանցիկ մեխանիզմներ և չափանիշներ,

5) կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան ուսումնական և այլ աջակցող ռեսուրսներ,

6) ուսումնական գործընթացի արդյունավետ կառավարման համար պատշաճ տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն և օգտագործում,

7) ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ մշտապես նորացվող, անաչառ և օբյեկտիվ տեղեկատվության պարբերաբար հրապարակում:

6. Համալսարանի որակի ներքին ապահովման համակարգի առաքելությունն է նպաստել Համալսարանի գործունեության հիմնական ոլորտներում (կրթություն, գիտություն և հանրային ծառայություններ) վստահության ամրապնդմանը և հավաստել, որ Համալսարանի շնորհած որակավորումների որակն ու գործող չափորոշիչները պահպանվում, շարունակաբար բարելավվում և արդյունավետ կառավարվում են:

7. Համալսարանի որակի ներքին ապահովման համակարգի ընդհանուր քաղաքականությունն իրականացվում է Համալսարանի տեսլականի, առաքելության և հիմնական նպատակների համատեքստում: Այն հիմնված է որակի բարձր չափանիշների ձեռքբերման և պահպանման սկզբունքի վրա:

8. Համալսարանի որակի ներքին ապահովման համակարգի քաղաքականության նպատակն է աջակցել Համալսարանին՝ իր առաքելությունն ու ռազմավարական նպատակները ազգային և միջազգային չափանիշներին համապատասխան իրականացնելու համար:

II. ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. **գնահատում**՝ տեղեկույթի համակարգված հավաքագրման, քանակական արտահայտման և օգտագործման գործընթաց՝ ողջ բուհի (ինստիտուցիոնալ գնահատում) կամ նրա ծրագրի (ծրագրային գնահատում) կրթական արդյունավետությունը և

բովանդակային համարժեքությունը նպատակներին համապատասխանեցնելու նպատակով.

2. Ինքնագնահատում՝ փաստական տվյալների համակարգված հավաքման, ուսանողների և շրջանավարտների հարցումների, դասախոսների և ուսանողների հետ քննարկումների գործընթաց, որի արդյունքներն ամփոփվում են ինքնագնահատման զեկույցում.

3. փորձագիտական գնահատում/արտաքին փորձաքննություն (peer review/ external review)՝ բուհի կամ կրթական ծրագրի որակի և արդյունավետության, կադրային-ռեսուրսային ապահովվածության վերաբերյալ արտաքին փորձագետների կողմից իրականացվող գնահատման գործընթաց.

4. ծրագրի մշակման արտոնում՝ գործընթաց, որի արդյունքում ուսումնական ստորաբաժանումն ստանում է բուհի պաշտոնական համաձայնությունը՝ ըստ ներկայացրած հայտի՝ նոր կրթական ծրագրի մշակման համար.

5. ծրագրի հաստատում՝ գործընթաց, որով բուհը գնահատում է նոր կրթական ծրագրի մշակման որակը և ծրագրային թիմի կարողությունը՝ իրականացնելու այն սահմանված ստանդարտներին համապատասխան.

6. ծրագրի մշտադիտարկում (մոնիթորինգ)՝ գործընթաց, որը դիտարկում է ծրագրի արդյունավետությունը՝ սահմանված նպատակներին և ակնկալվող կրթական վերջնարդյունքներին հասնելու տեսանկյունից և բացահայտում է ուսման որակի հետ կապված խնդիրները՝ բարելավող անհրաժեշտ միջոցառումների իրականացման լավագույն փորձի տարածման համար:

7. ծրագրի պարբերական վերանայում՝ գործընթաց, որով բուհը գնահատում է ծրագրի չափորոշիչների ու նպատակների ձեռքբերումը և փաստական մատուցման որակը՝ նրա իրականացման լրիվ շրջափուլի արդյունքներով և որոշում ընդունում ծրագրի շարունակման նպատակահարմարության կամ ծրագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ.

8. չափորոշիչ (standard)՝ սահմանված պահանջներ և պայմաններ, որոնց հիման վրա գնահատվում և ձեռք է բերվում բուհի կամ կրթական ծրագրի անհրաժեշտ որակը՝ հավատարմագրվելու կամ լիցենզավորվելու համար.

9. չափանիշներ (criteria)՝ մակարդակի էտալոնային կողմնորոշիչներ, որոնք բնութագրում են որոշակի խնդիրների և (կամ) չափորոշիչի իրագործման աստիճանը.

10. որակավորման նկարագրիչներ՝ ձևակերպումներ, որոնք սահմանում են որակավորումների վերջնարդյունքները բարձրագույն կրթության համապատասխան մակարդակներում և բնութագրում են դրանց միջև հիմնական տարբերությունները.

11. կրթական չափորոշիչներ՝ պահանջներ գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակի ու չափի վերաբերյալ, որոնք տվյալ ծրագրի շրջանակներում պահանջվում են ուսանողից՝ հայցվող որակավորման շնորհման համար.

12. կրթական ծրագրի պրոֆիլ՝ ծրագրի իրականացման արդյունքում շնորհվող որակավորման տարբերիչ հայտանիշների նկարագրություն՝ հիմնված նրա առանձնահատուկ նպատակների վրա, որը ցույց է տալիս, թե ինչպես է տվյալ որակավորումը հարաբերվում որակավորումների ընդունված շրջանակին և աշխատանքային միջավայրին.

13. որակ՝ բազմակողմ կատեգորիա, որն առնչվում է ինստիտուցիոնալ առաքելությանն ու նպատակներին, ինչպես նաև ընդունված չափորոշիչներին՝ տվյալ բուհի, ծրագրի կամ դասընթացի շրջանակներում: Կախված օգտագործման նպատակից՝ տարբերում են որակի տարբեր սահմանումներ՝ «որակը՝ որպես գերազանցություն», «որակը՝ որպես համապատասխանություն նպատակին», «որակը՝ որպես բարելավում» և այլն:

14. որակի ապահովում (quality assurance)՝ բարձրագույն կրթության համակարգի, բուհի կամ կրթական ծրագրի որակի գնահատման, վերահսկման, երաշխավորման, պահպանման և բարելավման շարունակական գործընթաց.

15. որակի աուդիտ (quality audit)՝ որակի գնահատման գործընթաց, որի միջոցով իրավասու արտաքին մարմինը ստուգում է բուհի կամ կրթական ծրագրի որակի ապահովման ներքին ընթացակարգերի առկայությունը, համարժեքությունը նպատակներին և դրանց փաստացի իրականացումը.

16. որակի ներքին ապահովման համակարգ (internal quality assurance system)՝ կառավարման համակարգ, որով բուհը սահմանված ընթացակարգերի և մեխանիզմների օգնությամբ իրագործում է իր որակի ապահովման քաղաքականությունն ու խնդիրները.

17. որակի բարելավում (quality improvement)՝ որակի կառավարման միջոցով որակի շարունակական բարձրացման գործընթաց.

18. որակի փորձաքննություն՝ բուհի կամ կրթական ծրագրի որակի արտաքին գնահատման (ուսումնասիրման) փաստացի գործընթաց.

19. որակի կառավարում (quality management)՝ որակի բարելավման նպատակով բուհի

կամ կրթական ծրագրի մակարդակում կանոնավոր իրականացվող միջոցառումների համակցություն.

20. որակի վերահսկում (quality control)՝ բուհի կամ կրթական ծրագրի որակի ստուգման ներքին կամ արտաքին գործընթաց.

21. որակի քաղաքականություն (quality policy)՝ որակի ապահովման ասպարեզում բուհի ընդհանուր մտադրություններն ու սկզբունքները պաշտոնապես արտահայտող ձևակերպում.

22. որակի մշակույթ (quality culture)՝ որակի համընդունելի և ինտեգրված սկզբունքների համակարգ, որը բնորոշ է բուհի կազմակերպական մշակույթին կամ կառավարման համակարգին.

23. որակի ապահովման եվրոպական ստանդարտներ և ուղենիշներ ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) կողմից մշակված և 2005թ. Բերգենի գագաթաժողովում ընդունված համաեվրոպական պաշտոնական փաստաթուղթ, որը ներառում է համապատասխան չափորոշիչներ և ուղենիշներ՝ բուհերում որակի ներքին ու արտաքին ապահովման, ինչպես նաև որակի ապահովման գործակալությունների համար.

24. ուսանողի կրթական ելքային արդյունքներ/կրթական ելքային արդյունքներ (student learning outcomes/learning outcomes)՝ ձևակերպումներ այն մասին, թե ինչ պետք է իմանա, ըմբռնի և ունակ լինի կատարելու սովորողը ուսումնառության գործընթացի ավարտին (կրթական ծրագրի, ծրագրային մոդուլի, դասընթացի): Ուսանողի ելքային արդյունքները սովորաբար արտահայտվում են գիտելիքներով, ինտելեկտուալ և գործնական կարողություններով ու հմտություններով:

25. հավատարմագրում՝ գործընթաց, որով պետական (կամ հասարակական) լիազոր մարմինը գնահատում է բուհի կամ կրթական ծրագրի որակը՝ նախանշված նվազագույն չափանիշներին կամ չափորոշիչներին դրանց համապատասխանությունը պաշտոնապես ճանաչելու համար: Այն բաղկացած է իրար հաջորդող երեք փուլերից՝ ինքնագնահատում և համապատասխան զեկույցի կազմում, փորձագետների ստուգայց և գնահատում, գնահատման զեկույցի կազմում:

III. ՈՐԱԿԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Կրթության որակի ապահովումը նշանակում է, որ բուհը հնարավորություն է ընձեռում սովորողին ուսումնառության ընթացքում ձեռք բերելու այնպիսի կարողություններ (կոմպետենցիաներ)՝ գիտելիքների, հմտությունների,

կարողությունների ձևով, որոնք համապատասխանում են թե՛ ներքին, թե՛ արտաքին շուկայի պահանջներին, անձի և հասարակության քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային ձգտումներին:

2. Որակի արտաքին ապահովումը կրթության որակի համապատասխանությունն է ժամանակակից աշխարհի մարտահրավերներին, եվրոպական կրթական տարածքի պահանջներին, ինչպես նաև կրթության ոլորտում Հայաստանի քաղաքականությանը և ՀՀ բարձրագույն մասնագիտական պետական կրթական չափորոշիչներին:

Որակի ներքին ապահովումը կախված է բուհի կառավարման համակարգի կատարելությունից և ճկունությունից, բուհի առաքելությունից, նպատակների և խնդիրների հստակեցումից, մասնագիտական կրթական ծրագրերի որակից, պրոֆեսորադասախոսական կազմի գիտական և կրթական ռեսուրսից, նյութատեխնիկական պայմաններից, ուսանողության մակարդակից, ֆինանսական վիճակից:

3. Որակը վերացական գաղափար է, ինչն անհնար է վերլուծել առանց կողմնապահության: Որակն իր էությամբ կարելի է գնահատել սուբյեկտիվորեն՝ չնայած այն հանգամանքին, որ միջոցների և արդյունքների համար որոշակի անկողմնակալ չափանիշներ հնարավոր է սահմանել: Առավել դժվար է կրթության որակը սահմանել և վերլուծել, քանի որ այն ներառում է մարդկանց աճը, զարգացումն ու փոփոխությունները, ովքեր հենց որակի ապահովման աղբյուր են, որակի արդյունք և որակի չափման միջոց:

4. Մասնագիտական կրթության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումների տրամաբանությունն ուղենշում է, որ կրթության որակի ապահովման գործում մեծ է ուսումնական հաստատությունների դերը. մասնագիտական ուսումնական հաստատությունն է պատասխանատու իր տրամադրած կրթության որակի համար: Պատասխանատվությունը կրթության որակի համար ենթադրում է այդ կրթության կազմակերպման և իրականացման, ինչպես նաև շարունակական բարելավման գործընթացների կառավարում: Այս իմաստով որակի ներքին ապահովման համակարգի արդյունավետության երաշխիքը դառնում է կրթական ողջ գործընթացի կառավարումը: Եթե ուսումնական հաստատությունը դիտարկենք որպես կազմակերպություն, ապա հնարավոր է վերջինիս կառավարումն իրականացնել կազմակերպության կառավարման այն մեխանիզմներով, որ կիրառվում է կազմակերպություններում, իհարկե, հաշվի առնելով ուսումնական հաստատության՝ որպես կրթական ծառայություն մատուցող

կազմակերպության առանձնահատկությունները:

5. «Որակ» հասկացությունը, որը դրված է Համալսարանի որակի ապահովման համակարգի հիմքում, «նպատակին համապատասխանություն» և «նպատակի համարժեքություն» սկզբունքների համատեղ ապահովումն է: Այսինքն՝ Համալսարանը, նրա կառույցներն ու գործընթացները որակյալ են, եթե համապատասխանում են այն նպատակին, որի համար նախատեսված են: Մյուս կողմից, բուն նպատակներն ինքնին պետք է լինեն հիմնավորված, համարժեք և տեղին:

6. Որակը՝ որպես «նպատակին համապատասխանության» սկզբունք, ընդգծում է համընդունելի չափանիշներին բավարարելու կամ համապատասխանելու անհրաժեշտությունը: Այստեղ ուշադրության կենտրոնում Համալսարանի կամ ծրագրի մակարդակում գործընթացների արդյունավետությունն է, որոնք ուղղված են սահմանված կամ տրված նպատակների կատարմանը: Համալսարանի առաքելությունը, նպատակներն ու խնդիրները որակի ապահովման «նպատակին համապատասխանության» մոդելի հիմնական ուղղորդիչներն են, քանի որ սահմանում են արդյունքների պլանավորման, մշտադիտարկման (մոնիթորինգի) և չափման շրջանակը: Դրանք նաև նպաստում են շահակիցների հետ կապին, ինչպիսիք են պետությունը, պետական կառավարման մարմինները, քաղաքացիական հասարակությունը, տնտեսությունը, գործատուները և սովորողները:

7. Հետևաբար Համալսարանի որակի ապահովման համակարգում որակի չափանիշներ են ինչպես «նպատակին համապատասխանությունը» (այսինքն՝ սահմանված նպատակին հասնելու երաշխիքը), այնպես էլ «նպատակի համարժեքությունը» (այսինքն՝ ընտրված նպատակի պատշաճությունը, տեղին լինելը, շահակիցների ակնկալիքներն ու պահանջները հաշվի առնելը):

Վերջինս կարող է ապահովվել միջազգային կրթական չափորոշիչների և աշխատաշուկայի հետ սերտ կապի պայմաններում:

IV. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Համալսարանի որակի ապահովման գործընթացների սկզբունքներն են՝
 - 1) գնահատման օբյեկտիվությունը,
 - 2) անընդհատությունը,
 - 3) թափանցիկությունը,

4) հրապարակայնությունը:

2. Համալսարանի որակի ապահովման քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

1) Համակարգային մոտեցում. Փոխկապակցված գործընթացների համակարգի նույնականացումը, արդիականացումը և կառավարումը նպաստում են հաստատության գործունեության արդյունավետությանը: Յուրաքանչյուր կազմակերպություն, այդ թվում Համալսարանը, համակարգ է, որն ունի իրեն հատուկ տարրերը և այդ տարրերի միջև փոխկապվածության սկզբունքները:

Համալսարանի գործունեության բոլոր ոլորտները, այդ թվում՝ ուսումնական, գիտահետազոտական և վարչական, ենթակա են գնահատման և հաշվետվողականության:

2) Կենտրոնացված կանոնակարգում. Որակի ապահովման գործընթացների համար գործում են միասնական կանոնակարգային և ընթացակարգային հենք ու գնահատման չափանիշներ, որոնցով առաջնորդվում են ուսումնական բոլոր ստորաբաժանումները: Այստեղ հիմնական համակարգող դերը վերապահված է Գիտական խորհրդին, որն իրականացնում է համապատասխան աշխատանքների պլանավորումը, կանոնակարգային/չափորոշչային փաստաթղթերի և ընթացակարգերի հաստատումը, որակի ապահովման նախատեսված գործընթացների վերահսկողությունը և արդյունքների քննարկումը:

3) Գործընթացների ապակենտրոնացված իրականացում. Գործընթացային մոտեցումը հնարավորություն է տալիս վարելու առավել ճկուն քաղաքականություն կառավարման, ինչպես նաև որակի բարելավման ուղղությամբ: Ճկունությունն ապահովում է արտաքին միջավայրի պահանջներին արձագանքելու և համապատասխան փոփոխություններ կատարելու հնարավորություն:

Առանձին առարկայական ոլորտներում կրթական չափորոշիչների և ծրագրերի որակի ապահովման գործընթացների համար պատասխանատու են ամբիոնները և ամբիոնների որակի ապահովման հանձնախմբերը: Որակի ապահովման ապակենտրոնացված գործընթացների համապատասխանությունը Համալսարանի միասնական չափանիշներին ապահովվում է կանոնակարգային և ընթացակարգային միասնական հենքի, Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի, ֆակուլտետների խորհուրդների, ամբիոնների որակի ապահովման հանձնախմբերի, քոլեջի որակի ապահովման հանձնախմբի ու գիտական խորհրդի միջոցով:

4) Ինքնագնահատում. Համալսարանի գործունեությունը գնահատվում է ըստ իր նպատակների, թե որքանով են իրականացվել սահմանված նպատակները: Որակի ապահովման ընդունված մոդելը ենթադրում է պլանավորման և գնահատման համակարգի առկայություն: Նպատակները պետք է պլանավորվեն, իսկ գործողությունները՝ լինեն չափելի: Սահմանված նպատակները պետք է լինեն հստակ, չափելի, իրագործելի, իրատեսական, ժամանակագրված և ձևավորվեն «SMART» սկզբունքով, այսինքն՝ որոշակիություն (S), չափելիություն (M), հասանելիություն (A), իրագործելիություն (R), ժամանակի մեջ հստակ կանխորոշվածություն (T):

5) Բարելավում. Համալսարանի որակի ապահովման համակարգը միտված է Համալսարանում որակի շարունակական բարելավման գործընթացներին նպաստելուն: Այս սկզբունքն իրականացվում է **PDCA** մոդելով՝ պլանավորել (Plan), կատարել (Do), ստուգել (Check), գործել (Act): Ինքնագնահատումը դիտարկվում է որպես Համալսարանում կրթության որակը բարձրացնելու կարևոր գործիք: Սովորողների, ջրջանավարտների և գործատուների հարցումները դիտվում են որպես որակի շարունակական բարելավման կարևոր գործիք:

6) Հենանշումների և վկայությունների վրա հիմնված մոտեցում. Համալսարանը գնահատում է իր ձեռքբերումները համապատասխան ազգային և միջազգային հենանիշների նկատմամբ: Համալսարանի որակի ապահովման մեթոդները հիմնված են ապացույցների/վկայությունների վրա, որտեղ վերջնարդյունքներն ու շահակիցների (այդ թվում՝ սովորողների, դասախոսների, գործատուների և հանրության) հետադարձ կապով ստացված տեղեկատվությունը հիմք է հանդիսանում վերլուծությունների և եզրակացությունների համար, ինչպես նաև դրանց հիման վրա պլանավորվում են բարելավմանն ուղղված միջոցառումները:

Համալսարանը պետք է կարողանա արագ արձագանքել փոփոխություններին, ինչը կհանգեցնի անընդհատ բարելավման:

7) Անձնակազմի ընդլայնված և գիտակցված մասնակցություն. Համալսարանը խրախուսում է դասախոսական և վարչական կազմերի ընդլայնված և գիտակցված մասնակցությունը որակի ապահովման և բարելավման գործընթացներում, խթանում անհատական նախաձեռնություններն ուսումնական (ուսումնամեթոդական ստորաբաժանում, ամբիոն) և վարչական ստորաբաժանումների որակի ապահովման գործընթացներում:

Անձնակազմի ընդլայնված և գիտակցված ներգրավումը հնարավորություն է տալիս օգտագործելու նրանց կարողությունները Համալսարանի նպատակների իրականացման համար: Այս իմաստով վարչական և դասախոսական կազմի պարտականությունների և իրավունքների ճիշտ ձևակերպումը կնպաստի հաստատության առաքելության և նպատակների իրականացմանը, ընդ որում, ամբողջական և մասնագիտական մասնակցության միջոցով: Սա ենթադրում է կադրային համապատասխան քաղաքականություն, որը պետք է փաստաթղթավորվի և ունենա կառավարման ու գնահատման համապատասխան նպատակների, ուղղությունների միջավայր, որտեղ անձնակազմն ամբողջությամբ ներգրավված է հաստատության նպատակներին հասնելու համար:

8) Ուսանողների, ՊԴ կազմի և արտաքին գնահատողների ներգրավում. Սովորողների, շրջանավարտների, ՊԴ կազմի և գործատուների լիարժեք մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում համակարգի արդյունավետության հիմնական երաշխիքներից է, ինչպես նաև եվրոպական չափորոշիչների պահանջը: Նախատեսված է տարբեր ոլորտներում նրանց մասնակցության հետևյալ հիմնական ձևերը՝

- ուսանողների կողմից դասընթացի, պրակտիկայի, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական կազմի կոմպետենցիաների գնահատման հարցումներ,
- Համալսարանում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումներ,
- Համալսարանի ուսումնական, գիտական և կազմակերպչական գործընթացներից և ռեսուրսներից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցումներ,
- դասախոսի ինքնագնահատման և զարգացման կարիքների գնահատման հարցումներ,
- Համալսարանի ուսումնական, գիտական և կազմակերպչական գործընթացներից և ռեսուրսներից ՊԴ կազմի բավարարվածության վերաբերյալ հարցումներ,
- շրջանավարտներից գործատուների բավարարվածության մակարդակի վերաբերյալ կարծիքներ,
- պրակտիկանտների դասավանդման վերաբերյալ աշակերտների և ուսուցիչների կարծիքներ,
- ինքնագնահատման բուհական և կրթական ծրագրային գործընթացներ,

- ուսանողների կարիքների գնահատման հետազոտություններ,
- ավարտական ատեստավորման հանձնախմբերում արտաքին շահառուների ներգրավվածություն,
- ուսանողների ներգրավում Հոգաբարձուների և Գիտական խորհուրդների կազմերում,
- ուսանողների, դասախոսների և շրջանավարտների ներգրավում տարբեր հանձնախմբերում (ՌԾ-ի մշակման, ներքին իրավական ակտերի մշակման, ՄԿԾ-ի մշակման և այլն),
- ուսանողների ներգրավում հետազոտությունների իրականացման և տեղեկատվության տարածման գործընթացներում,
- դասախոսների և ուսանողների ներգրավում փաստաթղթերի մշակման գործընթացում:

Արդյունքում Համալսարանը պետք է մշակի համապատասխան մեխանիզմներ, որոնք ուղղված կլինեն դիմորդների, սովորողների, շրջանավարտների, ՊԴ կազմի և գործատուների՝ կրթության բովանդակությանը և կազմակերպմանը վերաբերող պահանջների բացահայտմանը:

9) Փոխկապվածություն որակի ապահովման ներքին և արտաքին գործընթացների միջև. Որակի ներքին ապահովումը արտաքին գնահատման հիմքն է և կառուցվում է վերջինիս չափանիշների և ընթացակարգերի հաշվառմամբ: Ըստ այդմ, Համալսարանի ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնագնահատումները որակի ապահովման ներքին և արտաքին գործընթացների հիմնական փոխկապակցող օղակներն են:

V. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Համալսարանի որակի ապահովման համակարգի հիմնական նպատակներն են՝

- 1) երաշխավորել բարձր չափանիշների պահպանումը Համալսարանի գործունեության բոլոր հիմնական ոլորտներում,
- 2) ստեղծել կանոնակարգային և կազմակերպական հիմք՝ Համալսարանի ու նրա կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար, ստեղծել կապ որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների միջև,

- 3) խթանել կրթության որակի շարունակական բարելավումը և որակի մշակույթի զարգացումը Համալսարանում,
- 4) ցույց տալ շահակիցներին և արտաքին գնահատողներին, որ որակի ապահովման բարձրացման որդեգրած քաղաքականությունը, համակարգը և գործընթացներն արդյունավետ են գործում,
- 5) ապահովել կրթության որակի համար Համալսարանի հաշվետվողականությունը սովորողների, գործատուների, հիմնադրի (Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության), լիազոր մարմնի (Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն) և ֆինանսավորող այլ կազմակերպությունների առջև,
- 6) օժանդակել ազգային, տարածաշրջանային և միջազգային որակի ապահովման գործակալությունների և համալսարանների հետ կապերի ամրապնդմանը:

2. Համալսարանի որակի ապահովման համակարգի խնդիրներն են՝

- 1) համակարգված գործընթացների միջոցով աջակցել կրթական չափորոշիչների պահպանմանը, կրթական ծրագրերի որակի ապահովմանը և շարունակական բարելավմանը,
- 2) ստեղծել պայմաններ՝ կրթական ծրագրերի որակի ինքնագնահատումը և արտաքին գնահատումն ու հավաստարմագրումն իրականացնելու համար,
- 3) որակի ապահովման համար նախատեսել հաշվետվողականության ընթացակարգեր և նախաձեռնել համապատասխան գործընթացներ,
- 4) ապահովել որակի ապահովման գործընթացների և ընթացակարգերի թափանցիկությունը, դրանցում սովորողների և շրջանավարտների, հիմնական գործատուների և արտաքին փորձագետների գործուն մասնակցությունը,
- 5) ձևավորել անհրաժեշտ նախադրյալներ և խթանող մեխանիզմներ տրամադրվող կրթության որակի շարունակական բարելավման համար,
- 6) ապահովել, որ Համալսարանի կրթական ծրագրերի որակը բավարարի շահակիցների ակնկալիքները, իսկ Համալսարանի շրջանավարտները ձեռք բերեն այնպիսի գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ (կոմպետենցիաների ձևավորում), որոնք պահանջված են նրանց կողմից:

VI. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Համալսարանը պարտավորություն է ստանձնում որակի մշակույթի զարգացման վերաբերյալ, ինչն ընդգծում է որակի և որակի ապահովման կարևորությունն իր աշխատանքում: Քաղաքականությունը և ընթացակարգերը պետք է պաշտոնապես հաստատվեն և հանրայնորեն մատչելի լինեն: Դրանք պետք է ներառեն նաև սովորողների և այլ շահակիցների դերի ձևակերպումը:

2. Որակի ապահովման քաղաքականությունը սահմանում է Համալսարանի սկզբունքային մոտեցումները որակի ապահովման հիմնահարցերի և դրանց իրագործման ուղիների վերաբերյալ:

3. Որակի ապահովման քաղաքականության միջոցով Համալսարանը ստեղծում է որակի ապահովման այնպիսի համակարգ, որը հստակ սահմանում է որակի ապահովման ինստիտուցիոնալ գործընթացների իրականացման սկզբունքները, ուղենիշները, որակի ապահովման համակարգի կառուցվածքը և ընթացակարգերը:

4. Համալսարանի որակի ապահովման քաղաքականության նպատակն է ներդնել որակի ապահովման պաշտոնական, թափանցիկ և վստահելի համակարգ՝ հիմնված գործունեության արդյունքների և կիրառվող գործընթացների ներքին և արտաքին գնահատման վրա՝ բարձրացնելով Համալսարանի ուսումնական, հետազոտական և կառավարման գործընթացների արդյունավետությունը: Այն ընդգրկում է հաստատության գործունեության բոլոր հիմնական բնագավառները՝ նշանակետ ունենալով բուհի ռազմավարական նպատակներին դրանց համապատասխանեցնելը և այդ նպատակների իրականացման համար ուժերի առավելագույն ներդրում ապահովելը:

5. Համալսարանի որակի ապահովման քաղաքականության խնդիրներն են՝

- 1) տրամադրել ուղենիշներ որակի ներքին ապահովման գործընթացների և ընթացակարգերի մշակման և իրականացման համար,
- 2) տրամադրել ուղենիշներ որակի ներքին չափորոշիչների և չափանիշների սահմանման համար՝ համահունչ ընդունված եվրոպական պահանջներին,
- 3) նպաստել որակի շարունակական բարելավման մշակույթի հաստատմանը և հետագա զարգացմանը Համալսարանում,
- 4) օգնել բացահայտելու Համալսարանի ուժեղ և հատուկ ուշադրության արժանի ոլորտները՝ կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով շարունակական բարելավում ապահովելու համար,

- 5) ներդաշնակեցնել որակի ապահովման տարբեր ոլորտները և գործընթացները Համալսարանում,
 - 6) ամրապնդել Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի դերակատարությունը որակի կառավարման և բարձրացման հարցերում,
 - 7) նպաստել Համալսարանի առաքելության իրականացմանը՝ նրա ռազմավարական նպատակներին և խնդիրներին համապատասխան,
 - 8) պարբերական վերանայումների միջոցով շարունակաբար բարելավել որակի ապահովման համակարգը, կատարելագործել և արդիականացնել որակի ապահովման գործառույթները, ընթացակարգերը, չափանիշները և դրանց հետ առնչվող պաշտոնական փաստաթղթերը,
 - 9) երաշխավորել որակի ապահովման քաղաքականության և ռազմավարության համապատասխանությունը Համալսարանի առաքելությանը, ռազմավարական նպատակներին և խնդիրներին:
6. Որակի ապահովման քաղաքականությունը կառուցվում է հետևյալ սկզբունքների վրա՝
- 1) Համալսարանը պատասխանատու/հաշվետու է հասարակությանը կրթության որակի ապահովման համար, որն արտահայտվում է ծրագրերի և որակավորումների պարբերական գնահատումներով,
 - 2) քաղաքականությունը թափանցիկ է, պաշտոնապես ընդունված է Համալսարանի իրավասու մարմնի (Հոգաբարձուների խորհուրդ, Գիտական խորհուրդ) կողմից և ապահովում է կրթական ծրագրերի որակի նախանշված ստանդարտներն ու շարունակական բարելավումը,
 - 3) քաղաքականությունը կառուցվում է որակի շարունակական բարձրացման միտումով, նախատեսում է մեխանիզմներ՝ Համալսարանում որակի մշակույթի կայուն զարգացման համար,
 - 4) քաղաքականության ելակետը Համալսարանի առաքելությունը և ռազմավարական նպատակներն են, իսկ որակի գնահատման գործընթացը պետք է արտացոլի, թե ինչ չափով են դրանք իրագործվում,
 - 5) քաղաքականությունը կիրառելի է բոլոր ընթացիկ և պլանավորվող ծրագրերի և կրթական բոլոր աստիճանների նկատմամբ,

- 6) կրթական բոլոր ծրագրերը ենթակա են ներքին և արտաքին փորձաքննության՝ նախօրոք որոշված պարբերականությամբ՝ համաձայն սահմանված չափանիշների,
- 7) Համալսարանի ներքին և արտաքին շահակիցները, հասարակությունը, տեղեկացված են քաղաքականության, առնչվող գործընթացների և գնահատումների ժամանակացույցի մասին,
- 8) որակի գնահատման գործընթացը հիմնվում է ինքնագնահատման և արտաքին անկախ փորձաքննության վրա,
- 9) որակի գնահատման գործընթացում ներգրավված են Համալսարանի ներքին և արտաքին բոլոր հիմնական շահակիցները,
- 10) Համալսարանն ունի որակի գնահատման գործընթացն ուղղորդող փաստաթղթային փաթեթ, որը տեղադրվում է Համալսարանի պաշտոնական կայքէջում,
- 11) Համալսարանը հաստատել և գործադրում է որոշակի ընթացակարգեր՝ որակի ապահովման իր քաղաքականության և առնչվող գործընթացների պարբերական փորձաքննության և վերանայման համար,
- 12) Համալսարանը գնահատում է իր ծրագրերի վիճակը և հեռանկարները՝ երկրում միջազգայնորեն ընդունված էտալոնային (ելակետային) կողմնորոշիչների (benchmarks) օգտագործմամբ,
- 13) որակի կառավարման վերաբերյալ արդյունավետ որոշումներ և եզրակացություններ կարող են ընդունվել միայն փաստական տվյալների և տեղեկատվության վերլուծության հիման վրա: Համալսարանը պետք է ունենա համարժեք տեղեկատվական համակարգ և տեխնոլոգիաներ՝ որակի ապահովմանն առնչվող տեղեկատվական հոսքերի ձևավորման և կառավարման համար:

VII. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. Որակի ներքին ապահովման համակարգում ներգրավված բուհական հիմնական ստորաբաժանումներն/միավորումներն ու կառույցները և պատասխանատվությունների բաշխումը նրանց միջև հետևյալն է՝

1) **Համալսարանի Հոգաբարձուների խորհուրդը** հաստատում է Համալսարանի գործունեության տարեկան և ռազմավարական ծրագրերը, լսում ու գնահատում է Համալսարանի գործունեության տարեկան հաշվետվությունը (որը ներկայացնում է ռեկտորը), տարեկան հաշվետվության շրջանակներում քննարկում է որակի ապահովման

համակարգի արդյունքները և առաջադրում բարելավման խնդիրներ, իրականացնում Համալսարանի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված գործառույթներ:

2) Համալսարանի Գիտական խորհուրդը`

- հաստատում է որակի ներքին ապահովման ու կառավարման քաղաքականությունը,
- Համալսարանի տարեկան հաշվետվության շրջանակներում քննարկում է որակի ապահովման գործընթացների արդյունքները և առաջադրում բարելավման միջոցառումներ,
- իրականացնում է որակի ապահովման ներբուհական գործընթացների արդյունքների և ֆակուլտետի խորհրդի եզրակացությունների քննարկումն ու հաստատումը,
- հանդես է գալիս որպես որակի մշտադիտարկման, վերահսկման և ապահովման մարմին` գնահատելու որակի ապահովման ընթացակարգերի և չափանիշների համապատասխանությունն ընդունված չափորոշիչներին,
- իրականացնում է Համալսարանի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված գործառույթներ:

3) Համալսարանի ռեկտորը`

- ղեկավարում է Համալսարանի որակի ապահովման և կառավարման քաղաքականության և համապատասխան ռազմավարության մշակման աշխատանքները, ուղղորդում դրանց իրականացումը, ապահովում որակի ապահովման համակարգի ներդաշնակ գործունեությունը, կարգաբերում համակարգի փոխկապակցությունը և փոխգործակցությունը բուհական կառավարման այլ համակարգերի (մարմինների) հետ (մասնավորապես չորս կենտրոնների հետ),
- ղեկավարում է Համալսարանի ինքնագնահատման/ինքնավերլուծության գործընթացը և հաջորդող գործողությունների պլանավորումն ու վերահսկումը,
- իրականացնում է որակի ապահովման համակարգի օպերատիվ կառավարումն ու վերահսկումը,
- ապահովում է գործառնական կապերն ու փոխգործակցությունը ներգրավված հիմնական կառույցների միջև,

- իրականացնում է Համալսարանի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված գործառույթներ:

4) Համալսարանի Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնը՝

- ապահովում է կրթական ծրագրերի (միջին մասնագիտական, բակալավրի, մագիստրոսի) մշակման և դրանց արդյունավետ իրականացման ընթացակարգեր և վերահսկման ու մշտադիտարկման մեխանիզմներ,
- վերահսկում է կրթական ծրագրերի (միջին մասնագիտական, բակալավրի, մագիստրոսի կրթական ծրագրերի) մշակման և իրականացման որակը և ստուգում դրանց համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին/ստանդարտներին և աշխատաշուկայի պահանջներին,
- համակարգում և վերահսկում է ուսումնական ստորաբաժանումներում կրթական ծրագրերի որակի ապահովման ու կառավարման գործառույթների և ընթացակարգերի իրականացումը,
- իրականացնում է իր կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված գործառույթներ:

Համալսարանի Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնում որակի ապահովման պատասխանատուն կենտրոնի տնօրեն-պրոռեկտորն է:

5) Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնը՝

- նպաստում է Համալսարանում գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, խմբագրական ու հրատարակչական գործընթացների իրականացմանը,
- կազմակերպում է միջազգային և հանրապետական գիտաժողովներ, սեմինարներ, աշխատաժողովներ և խթանում Համալսարանի շահակիցների մասնակցությունը,
- կազմակերպում և համակարգում է հետբուհական ու լրացուցիչ կրթական գործընթացը,
- նպաստում է գիտական կադրերի պատրաստմանը և Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի նպատակառացիորակ համալրմանը,
- նպաստում է կրթական և գիտական գործընթացների արդյունավետ փոխկապակցվածության ապահովմանը,
- մշակում և պարբերական վերանայում է Համալսարանի որակի ապահովման և կառավարման քաղաքականությունն ու հայեցակարգը,

- ապահովում է կրթության որակի ապահովման ու կառավարման կազմակերպամեթոդական և չափորոշչային փաստաթղթերը,
- աջակցում է Համալսարանի գործունեության բոլոր հիմնական ոլորտներում որակի միասնական չափանիշների պահպանմանը, որակի ապահովման ու կառավարման գործընթացների ներդաշնակեցմանը և իրականացմանը,
- խթանում է Համալսարանում որակի մշակույթի տարածումն ու բարելավումը,
- աջակցում է Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությանը և ծավալում փոխկապակցված գործունեություն՝ կրթության որակի ապահովման տեսանկյունից,
- աջակցում է կրթության որակի կառավարման համար Համալսարանի հաշվետվողականության ապահովմանը ներքին և արտաքին շահակիցների առջև:
- ստեղծում է իրավական և կազմակերպական հենք և ցուցաբերում վարչական օժանդակություն՝ Համալսարանի և նրա կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար, ապահովում տարատեսակ կապեր որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների միջև,
- հաստատում է կապեր որակի ապահովման ազգային, տարածաշրջանային և միջազգային գործակալությունների և մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ապահովման կենտրոնների հետ և ապահովում փոխշահավետ համագործակցություն,
- իրականացնում է իր կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված գործառույթներ:

Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի գործունեության որակի ապահովման պատասխանատուն կենտրոնի տնօրենն է:

6) Համալսարանի Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնը՝

- հաստատում ու զարգացնում է արտաքին համագործակցության կապեր, Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներին տրամադրում հանրապետական ու միջազգային գիտակրթական ծրագրերի, դրամաշնորհների վերաբերյալ տեղեկատվություն և աջակցություն,
- ապահովում և խթանում է բուհերի կարողությունների զարգացմանը միտված ծրագրերում Համալսարանի մասնակցությունը,

- կազմակերպում և համակարգում է միջազգային ակադեմիական փոխանակումների ու կրեդիտային շարժունության ծրագրերում Համալսարանի վարչական, պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության ներգրավման աշխատանքները,
- ապահովում ու խթանում է Համալսարանի միջազգայնացմանն ուղղված գործընթացները՝ ըստ միջազգայնացման ազգային ռազմավարության գերակա ուղղությունների,
- խթանում ու զարգացում է հասարակայնության հետ Համալսարանի կապերը, համակարգում լրատվամիջոցների հետ աշխատանքները,
- պատրաստում ու տարածում է Համալսարանի և նրա կազմում գտնվող ուսումնական հաստատությունների մասին հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը նպաստող նյութեր,
- իրականացնում է իր կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված գործառույթներ:

Համալսարանի Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի գործունեության որակի ապահովման պատասխանատուն կենտրոնի տնօրենն է:

7) Գրադարան-Ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնը՝

- իրականացնում է լիարժեք ու օպերատիվ գրադարանային ու տեղեկատվական-մատենագիտական սպասարկում տեղեկատվական պահանջներին համապատասխան, գրադարանի հավաքածուների լայն հասանելիության հիման վրա կենտրոնից օգտվողներին,
- ընդլայնում է կենտրոնի տեխնիկական հագեցման, գրադարանային-տեղեկատվական գործընթացների ավտոմատացման հիման վրա գրադարանային-տեղեկատվական ծառայությունները, բարելավում դրանց որակը,
- խթանում է տեղեկատվական մշակույթի տարածումը, օգտվողներին ուսուցանում տեղեկատվության որոնման արդի մեթոդներ,
- նպաստում է գրադարանային հավաքածուների ձևավորմանը՝ Համալսարանի կրթական ծրագրերին, գիտահետազոտական գործունեությանը, ֆինանսական ռեսուրսներին ու օգտվողների տեղեկատվական պահանջներին համապատասխան,

- կազմակերպում ու վարում է տեղեկատու-մատենագիտական համակարգ և տվյալների էլեկտրոնային բազաներ,
- հայրենական ու արտասահմանյան տեղեկատվական ռեսուրսներով ապահովում է Համալսարանի ուսումնական գործընթացի ու գիտահետազոտական գործունեությունը,
- Համագործակցում է Համալսարանի այլ կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև՝ Համալսարանի արտաքին շահակից-կազմակերպությունների հետ,
- ապահովում ու կառավարում է Համալսարանի տեղեկատվական համակարգերի աշխատանքը, մշակում ու ներդնում նոր համակարգեր,
- սպասարկում է Համալսարանի համակարգչային տեխնիկական ու սարքավորումները,
- աջակցում է կրթական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը,
- ապահովում է Համալսարանի ենթակառուցվածքների ու լսարանների համակարգիչների տեղեկատվության անվտանգությունը՝ ըստ անհրաժեշտության,
- զարգացնում է Համալսարանում ակադեմիական խորհրդատվությունների ինստիտուտը,
- իրականացնում է իր կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված գործառույթներ:

Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի գործունեության որակի ապահովման պատասխանատուն կենտրոնի տնօրենն է:

8) Ֆակուլտետներ.

Ֆակուլտետի դեկանը՝

- համակարգում է մասնագիտական կրթական ծրագրերի (բակալավրի, մագիստրոսի և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերի) իրականացումը,
- ֆակուլտետի շրջանակներում իրականացնում է համալսարանի որակի ապահովման քաղաքականությունն ու ռազմավարությունը,
- պատասխանատու է ֆակուլտետի մակարդակով որակի ապահովման և վերահսկման բոլոր գործառույթների կազմակերպման և իրականացման համար,
- կազմակերպում է ֆակուլտետի ինքնավերլուծությունը՝ ինքնագնահատման գործընթացի շրջանակներում,
- իրականացնում է Համալսարանի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով

նախատեսված գործառույթներ:

Ֆակուլտետի խորհուրդը՝

- առաջարկում է ֆակուլտետի որակի ներքին ապահովման և կառավարման քաղաքականություն Համալսարանի հիմնական ուղենիշներին համապատասխան,
- քննարկում է ֆակուլտետի որակի ապահովման գործընթացների արդյունքները, հաստատում դրանք և առաջադրում բարելավման միջոցառումներ,
- նախապատրաստում և գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում որակի ապահովման վերաբերյալ կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշչային փաստաթղթերը (Որակի ապահովման ու կառավարման կենտրոնի հետ),
- Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանն է երաշխավորում որակի ապահովման և գնահատման ընթացակարգերը, կրթական ծրագրերի չափորոշիչներն ու ուսումնական պլանները, որակի ապահովման կանոնակարգային փաստաթղթերը,
- հանդես է գալիս որպես վերահսկողական մարմին՝ գնահատելու ֆակուլտետի որակի ապահովման գործընթացների իրականացումը ըստ համապատասխան ընթացակարգերի և չափանիշների, ինչպես նաև առաջադրում բարելավման միջոցառումներ (առանձին դեպքերում Որակի ապահովման ու կառավարման կենտրոնի հետ),
- իրականացնում է Համալսարանի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված գործառույթներ:

Ֆակուլտետի գործունեության որակի ապահովման պատասխանատուն ֆակուլտետի ղեկանն է: Ֆակուլտետի խորհրդի կազմում ներգրավված է ֆակուլտետի որակի ապահովման համակարգողը:

9) Ամբիոններ.

Ամբիոնի վարիչը՝

- պատասխանատու է ստորաբաժանման մակարդակով որակի ապահովման և վերահսկման բոլոր գործառույթների կազմակերպման և իրականացման համար,
- կազմակերպում է ստորաբաժանման կրթական ծրագրերի մշակման, իրականացման, մշտադիտարկման, պարբերական վերանայման ու կատարելագործման գործընթացներ՝ որակի ապահովման ընթացակարգերին համապատասխան,
- ամբիոնի շրջանակներում իրականացնում է համալսարանի որակի ապահովման

քաղաքականությունն ու ռազմավարությունը,

- ապահովում է անհրաժեշտ ռեսուրսներ (դասախոսական կազմ, տեխնիկական սարքավորումներ, գրականություն և այլն) և ուսումնաօժանդակ ծառայություններ կրթական ծրագրերի իրականացման համար՝ ծրագրերի չափորոշիչներին/ստանդարտներին համապատասխան,
- ապահովում և վերահսկում է ամբիոնում գիտահետազոտական գործունեության որակը,
- կազմակերպում է ամբիոնի ինքնավերլուծությունը՝ ինքնագնահատման գործընթացի շրջանակներում,
- իրականացնում է Համալսարանի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված գործառույթներ:

Ամբիոնի որակի ապահովման հանձնախումբը՝

- հաստատվում է ամբիոնի նիստի առաջարկով և ռեկտորատի որոշմամբ,
- ապահովում է ամբիոնի աշխատանքների պլանավորումն ու դրա կատարման հաշվետվողականությունը,
- ապահովում է ամբիոնի մի շարք փաստաթղթերի մշակումը,
- վերահսկում է ամբիոնում կրթական ծրագրերի պլանավորման, մշակման, փոփոխման և դրանց որակի ապահովման գործընթացների իրականացումը,
- վերահսկում է կրթական ծրագրերի պատշաճ ռեսուրսային և մեթոդական ապահովվածությունը,
- պատասխանատու է ամբիոնում ուսուցման որակի ապահովման և ներքին վերահսկման, ինչպես նաև բուհի մակարդակով ընդունվող որոշումների հետևողական իրագործման հսկողության համար,
- իրականացնում է Համալսարանի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված գործառույթներ:

Ամբիոնի գործունեության որակի ապահովման պատասխանատուն ամբիոնի վարիչն է: Ամբիոնի որակի ապահովման հանձնախմբի կազմ՝ ամբիոնի վարիչ, մեթոդական միավորումների ղեկավարներ, ամբիոնի որակի ապահովման համակարգող, ամբիոնի ՈւՄ և ՈւԳԸ պատասխանատուներ:

10) Ուսանողները՝

- ընդգրկված են ուսման որակի գնահատման գործընթացներում՝ մասնակցելով ուսանողական հարցումներին և շրջանավարտների բավարարվածության

մակարդակի վերաբերյալ հարցումներին,

- ընդգրկված են Համալսարանի Հոգաբարձուների խորհրդի, Գիտական խորհրդի և Ֆակուլտետի խորհրդի, ինչպես նաև Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագիրը մշակող հանձնախմբի կազմերում,
- մասնակցում են Համալսարանի որակի ապահովման գործընթացներին՝ որպես ուսանողական ինքնակառավարման մարմինների (ուսանողական խորհուրդ/ՈւԽ, ուսանողական գիտական ընկերություններ/ՈւԳԸ և այլն) ներկայացուցիչներ,
- սահմանված ընթացակարգի համաձայն՝ մասնակցում են Համալսարանի ռազմավարական ծրագրի մշակման, ինչպես նաև ինքնագնահատման գործընթացներին և համապատասխան զեկույցի պատրաստմանը՝ որպես ինքնավերլուծության աշխատանքային խմբի անդամներ,
- ամբիոնների, ֆակուլտետների ՈւԽ և ՈւԳԸ պատասխանատուները ընդգրկված են համապատասխանաբար ամբիոնի որակի ապահովման հանձնախմբերի և ֆակուլտետների զարգացման ռազմավարական ծրագրերը մշակող հանձնախմբերի կազմերում:

ՈւԳԸ-ի գործունեության որակի ապահովման պատասխանատուն ՈւԳԸ-ի նախագահն է, ՈւԽ-ի գործունեության որակի ապահովման պատասխանատուն ՈւԽ-ի նախագահն է:

11) Քոլեջ.

Քոլեջի ղեկավարը՝

- համակարգում է միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը՝ գերիսնդիր համարելով կրթության շարունակականությունը,
- ապահովում է քոլեջի զարգացման ռազմավարական ծրագրի, դրա իրականացման ժամանակացույց-պլանի մշակումը, ինչպես նաև տարեկան (կարճաժամկետ) աշխատանքային պլանի կազմումն ու դրա կատարման հաշվետվողականությունը,
- պատասխանատու է քոլեջի մակարդակով որակի ապահովման և վերահսկման բոլոր գործառույթների կազմակերպման և իրականացման համար,
- կազմակերպում է ստորաբաժանման կրթական ծրագրերի մշակման, իրականացման, մշտադիտարկման, պարբերական վերանայման ու կատարելագործման գործընթացները՝ որակի ապահովման ընթացակարգերին համապատասխան,
- ստորաբաժանման շրջանակներում իրականացնում է որակի ապահովման

հաստատության քաղաքականությունն ու ռազմավարությունը,

- ապահովում է անհրաժեշտ ռեսուրսներ (դասախոսական կազմ, տեխնիկական սարքավորումներ, գրականություն և այլն) և ուսումնաօժանդակ ծառայություններ միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար՝ ծրագրերի չափորոշիչներին/ ստանդարտներին համապատասխան,
- ապահովում և վերահսկում է ուսումնական հետազոտական գործունեության որակը համալսարանի համապատասխան ամբիոնի ու գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կենտրոնի հետ,
- կազմակերպում է քոլեջի ինքնավերլուծությունը՝ ինքնագնահատման գործընթացի շրջանակներում,
- իրականացնում է ներքին իրավական ակտերով նախատեսված գործառույթներ:

Քոլեջի որակի ապահովման հանձնախումբը՝

- հաստատվում է քոլեջի մանկավարժական խորհրդի նիստի առաջարկով և ռեկտորատի որոշմամբ,
- վերահսկում է քոլեջում կրթական ծրագրերի պլանավորման, մշակման, փոփոխման և դրանց որակի ապահովման գործընթացների իրականացումը,
- վերահսկում է կրթական ծրագրերի պատշաճ ռեսուրսային և մեթոդական ապահովվածությունը,
- պատասխանատու է քոլեջում ուսուցման որակի ապահովման և ներքին վերահսկման, ինչպես նաև բուհի մակարդակով ընդունվող որոշումների հետևողական իրագործման հսկողության համար:
- առաջարկում է քոլեջի որակի ներքին ապահովման և կառավարման քաղաքականություն,
- իրականացնում է որակի ապահովման ներքին գործընթացների արդյունքների քննարկումն ու հաստատումը ,
- նախապատրաստում և գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում քոլեջի որակի ապահովման ու վերաբերյալ կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթերը (Որակի ապահովման ու կառավարման կենտրոնի հետ),
- Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանն է երաշխավորում քոլեջի որակի ապահովման և գնահատման ընթացակարգերը, կրթական ծրագրերի

չափորոշիչներն ու ուսումնական պլանները, որակի ապահովման կանոնակարգային փաստաթղթերը,

- հանդես է գալիս որպես վերահսկողական մարմին՝ գնահատելու քոլեջի որակի ապահովման գործընթացների իրականացումը ըստ համապատասխան ընթացակարգերի և չափանիշների և առաջադրում բարելավման միջոցառումներ,
- իրականացնում է ներքին իրավական ակտերով նախատեսված գործառույթներ:

Քոլեջի գործունեության որակի ապահովման պատասխանատուն քոլեջի տնօրենն է:


Քոլեջի որակի ապահովման հանձնախմբի կազմ՝ քոլեջի տնօրեն, քոլեջի փոխտնօրեն, որակի ապահովման համակարգողներ, քոլեջի դասախոսական կազմի ներկայացուցիչներ, ՈւԽ նախագահ և այլ ուսանողներ:

12) Արտաքին գնահատողները, շահառուները (փորձագետները, շրջանավարտները, գործատուները)՝

- կատարում են Համալսարանի գործունեության, որակի ապահովման համակարգի, ուսումնական ծրագրերի արտաքին փորձաքննություն,
- ընդգրկված են շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման (ավարտական ամփոփիչ քննության և մագիստրոսական թեզի պաշտպանության) հանձնաժողովների կազմերում,
- Համալսարանի նախաձեռնությամբ կարող են մասնակցել սովորողների ընթացիկ և (կամ) կիսամյակային գնահատման գործընթացներին,
- մասնակցում են Համալսարանում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության մակարդակի վերաբերյալ հարցումներին,
- մասնակցում են կրթական ծրագրերից և շրջանավարտների մասնագիտական որակից գործատուների բավարարվածության մակարդակի վերաբերյալ հարցումներին:

2. Գծապատկեր 1-ում տրված է Համալսարանի որակի ներքին ապահովման համակարգի կազմակերպական սխեման: Այն ցույց է տալիս համակարգում ներգրավված հաստատության միավորների և կառույցների հիերարխիկ կապը:

3. Գծապատկեր 1-ում պատկերված բոլոր միավորների և կառույցների պատասխանատվությունների նկարագրությունը ներկայացված է սույն հայեցակարգի 28-րդ կետում:



Գծապատկեր 1. Համալսարանի որակի ապահովման ներքին համակարգի կազմակերպական սխեմա

VIII. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

1. Որակի ապահովման ընթացակարգերը նպատակ ունեն պլանավորելու և հստակ գործողությունների վերածելու որակի ապահովման քաղաքականությամբ պահանջվող գործընթացները, ուղղորդելու դրանց իրականացման ընթացքը:

2. Ստորև ներկայացված են Համալսարանի որակի ապահովման հիմնական գործընթացներն ու ընթացակարգերը՝ ըստ առանձին ուղղություններին համապատասխան չափորոշիչների.

1) ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.

Համալսարանի կանոնադրությունը հաստատվում է ՀՀ կառավարության որոշմամբ: Համալսարանի կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու, կանոնադրության փոփոխության, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու որոշումների ընդունման իրավասությունը պատկանում է Համալսարանի Հոգաբարձուների խորհրդին:

Համալսարանի ռազմավարական ծրագիրը մշակվում է բոլոր ստորաբաժանումների հետ համատեղ՝ համապատասխան հանձնախմբով:

Համալսարանի առաքելության, սահմանած նպատակների և խնդիրների վերանայումը և համապատասխան փաստաթղթավորումը իրականացվում է 3 մակարդակով՝ ամբիոններ, ֆակուլտետներ ու քոլեջ և Համալսարանի վարչակազմ:

Համապատասխան հանձնախմբերի կազմերն այնպիսին են, որ հաշվի է առնվում պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանող կազմի, ուսանողների և վարչակազմի կարծիքները («ՇՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման, իրականացման և հաշվետվողականության հայեցակարգ»): Արտաքին շահակիցների պահանջներն առավելապես բացահայտվում են ինչպես Համալսարանի ուսանողների պրակտիկաների ընթացքում և աշխատաշուկան ուսումնասիրելիս (արտաքին շահակիցների շրջանում հարցումների իրականացում), այնպես էլ Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժնի միջնորդությամբ ամբիոնների համագործակցությամբ և հանձնախմբերում մասնակցությամբ:

Ռազմավարական ծրագրի (մասնավորաբար՝ առաքելության ու նպատակների)

իրականացումը գնահատելու և բարելավելու մեխանիզմները տրվում են «ՇՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման, իրականացման և հաշվետվողականության հայեցակարգ»-ում (շահակիցների ներգրավվածություն, շահակիցներից ստացված արձագանքների ուսումնասիրում և վերլուծում, արդյունքների գնահատման տարեկան զեկույցներ):

2) ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Համալսարանի Հոգաբարձուների և Գիտական խորհուրդների, ռեկտորի գործունեությունները կարգավորվում են Համալսարանի կանոնադրությամբ:

Ֆինանսների տնօրինումն ու բաշխումը իրականացվում է ըստ Համալսարանի եկամուտների և ծախսերի նախահաշվի կազմման, հաստատման և փաստացի տվյալների (կատարողականի) վերլուծության ընթացակարգի:

Համալսարանում գործում են կենտրոններ, բաժիններ, ֆակուլտետներ և ամբիոններ՝ ըստ համապատասխան կանոնադրությունների:

Հոգաբարձուների խորհրդի կազմը ձևավորվում է ըստ Համալսարանի կանոնադրության:

Ռեկտորի ընտրությունն իրականացվում է ըստ Համալսարանի ռեկտորի ընտրության կանոնակարգի:

Գիտական խորհրդի կազմը ձևավորվում է ըստ Համալսարանի կանոնադրության և Համալսարանի Գիտական խորհրդի կանոնակարգի:

Ֆակուլտետների խորհուրդների կազմերի ձևավորման և դեկանների ընտրության ընթացակարգերը նկարագրվում են «ՇՊՀ-ի ֆակուլտետի օրինակելի կանոնադրություն» փաստաթղթում, իսկ ամբիոնների վարիչների ընտրության ընթացակարգը՝ «ՇՊՀ-ի ամբիոնի օրինակելի կանոնադրություն» փաստաթղթում:

Կազմակերպական կառուցվածքի սխեմատիկ պատկերը՝ ըստ ենթակայության և հաղորդակցության կապերի հաստատվում է Համալսարանի Հոգաբարձուների խորհրդի կողմից, որը առկա է նաև Համալսարանի պաշտոնական կայքէջում:

Համալսարանի աշխատակիցների աշխատանքի ընդունումը, տեղափոխումը, հեռացումը, առաջխաղացումը, խրախուսումն ու տույժի կիրառումը իրականացվում են ըստ Գիտական խորհրդի կողմից հաստատված համապատասխան ընթացակարգերի:

Հոգաբարձուների խորհրդի, Գիտական խորհրդի և ֆակուլտետների խորհուրդների, ամբիոնների մեթոդական միավորումների, ամբիոնների որակի ապահովման հանձնախմբերի կազմերում ընդգրկված են պրոֆեսորադասախոսական և ուսանողական կազմերի տարբեր ներկայացուցիչներ՝ դրանով իսկ ապահովելով որոշում կայացնելու գործընթացներում ուսումնառողների և դասավանդողների մասնակցությունը:

Դրանից բացի, յուրաքանչյուր նոր փաստաթուղթ կամ որոշում գիտական խորհրդում քննարկելուց առաջ, երբ այն ներկայացվում է գիտական խորհրդի անդամներին, գիտական խորհրդի անդամներ ամբիոնների վարիչները և դեկանները պարտավորվում են իրազեկել պրոֆեսորադասախոսական կազմի համապատասխան ներկայացուցիչներին և կազմակերպել քննարկում առավել լայն շրջանակներում:

Մի շարք փաստաթղթեր, որոնք անմիջականորեն առնչվում են ուսանողների հետ, քննարկվում են ուսանողների տարբեր համակազմերի հետ:

Համալսարանի տարբեր ստորաբաժանումներում կազմվում են աշխատանքային պլաններ, որոնք բխում են գլխավորապես Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրից: Պլանները գնահատվում են ըստ ներկայացված հաշվետվությունների:

Մասնագիտական կրթական ծրագրերի գնահատումն ու վերանայումը իրականացվում է ըստ համապատասխան ընթացակարգի:

Հրապարակային տեղեկատվության տարածումը գլխավորապես ապահովվում է Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի կողմից: Յուրաքանչյուր ստորաբաժանման գործունեությունը լուսաբանվում է Համալսարանի պաշտոնական կայքէջի համապատասխան բաժնում, ինչպես նաև սոցիալական ցանցերում:

3) Մ Ա Ս Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Բ Թ Ա Կ Ա Ն Ծ Բ Ա Գ Բ Ե Ը

ՄԿԾ-ի մասնագրի, նկարագրի, ԹՕՊ-ի ձևաչափերի մշակումը կամ վերանայումը կազմակերպվում է Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կողմից: ՄԿԾ-ի մասնագիրը մշակվում է ամբիոնների մեթոդական միավորումների կողմից, իսկ առարկայական նկարագրերն ու ԹՕՊ-երը՝ համապատասխան դասավանդողների կողմից (վերանայվում են յուրաքանչյուր նոր ուսումնական տարվա սկզբում): Վերջիններս քննարկվում են համապատասխան ֆակուլտետների խորհուրդներում և երաշխավորվում

Գիտական խորհրդի հաստատմանը:

Մասնագիտության կրթական ծրագրի համար առաջավոր փորձի համեմատական վերլուծությունը (բենչմարքինգը) իրականացվում է ըստ անհրաժեշտության համապատասխան ամբիոններում:

Ուսումնառության արդյունքները և նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումները և մեթոդները տրվում են դասախոսների կողմից և արտացոլված են ՄԿԾ-ի նկարագրում և ԹՕՊ-ում:

Դասավանդման և ուսումնառության մոտեցումների և մեթոդների պարբերաբար արդիականացում կատարվում է յուրաքանչյուր նոր ուսումնական տարում՝ պայմանավորված վերջնարդյունքներով և ՄԿԾ-ների մշտադիտարկման և վերանայման համապատասխան վերլուծություններով:

Դասավանդման նյութերը և ռեսուրսների արդիականացումը կատարվում է ըստ ամբիոնների և Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի նախաձեռնության՝ ելնելով հիմնավոր անհրաժեշտությունից և բուհի բյուջեի հնարավորություններից:

Առկա է ուսանողների գնահատման ընթացակարգ, որը վերանայվում է հետազոտությունների արդյունքներով կամ անհրաժեշտությամբ պայմանավորված:

Ուսումնառության արդյունքներին համապատասխան սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները սահմանվում են ՄԿԾ-ի առարկայական նկարագրերում:

Գործում են ակադեմիական ազնվության հայեցակարգային մոտեցումներ:

Ուսումնառողների գնահատման քաղաքականությունը վերանայվում է՝ հիմնվելով ուսանողների և դասախոսների արձագանքների վրա և հաշվի առնելով գնահատման մոտեցումների առաջավոր փորձը:

Մասնագիտության կրթական ծրագրերը տարանջատված են տեսական, գործնական, լաբորատոր, սեմինար բաղադրիչների (ՄԿԾ-ի ԹՕՊ և նկարագիր):

Ուսումնառողի և շրջանավարտի կրթությունը շարունակելու և կարիերայի զարգացման հնարավորությունների հարցերը կարգավորվում են Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության կենտրոնի կողմից:

Մասնագիտական կրթական ծրագրերի վերանայման ժամանակ նկատի է առնվում նաև այն հանգամանքը, որ ապահովվի հաստատության ներսում կամ տեղական ու միջազգային այլ հաստատությունների տվյալ կամ այլ մասնագիտության կրթական

ծրագրերի հետ համահունչությունը:

Ուսանողների և դասավանդող անձնակազմի շարժունության հնարավորությունները ուսումնասիրվում և ընդլայնվում են Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի կողմից:

Արտաքին և ներքին շահակիցների կարիքների ուսումնասիրության համար իրականացվում են հարցումներ, անցկացվում են քննարկումներ, զրույցներ, բանավեճեր:

Մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկումը, գնահատումն ու վերանայումը իրականացվում է ըստ համապատասխան ընթացակարգի:

4) ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ուսանողների մասնագիտական կողմնորոշման համար էական նշանակություն ունի Համալսարանի ավագ դպրոցի գործունեությունը: Բացի այդ անցկացվում են մասնագիտական անվճար պարապմունքներ այն աշակերտների համար, ովքեր հետագայում լինելու են Համալսարանի դիմորդ:

Բակալավրի (առկա, հեռակա), մագիստրատուրայի և ասպիրանտների/հայցորդների ընդունելությունը կազմակերպվում և իրականացվում են ըստ համապատասխան կարգերի Յուրաքանչյուր մասնագիտության կրթական ծրագրում ուսումնառության տեղերի տեղաբաշխումը կատարվում է համապատասխան ամբիոնների նիստերում և ֆակուլտետների խորհուրդներում քննարկմամբ, որտեղ նկատի է առնվում նախորդ տարիների ցուցանիշները և աշխատաշուկայի պահանջներն ու զարգացման միտումները:

Ընդունող հանձնաժողովն իրականացնում է ընդունելության արդյունավետ ուսումնասիրություն:

Ուսանողներն ընդգրկված են Հոգաբարձուների խորհրդի, Գիտական խորհրդի, ֆակուլտետների խորհուրդների և այլ հանձնախմբերի կազմերում՝ ներկայացնելով ուսանողների համապատասխան կարիքները: Բացի այդ, ուսանողների շրջանում պարբերական հարցումներ են անցկացվում, որոնց արդյունքները վերլուծվում և համապատասխան միջոցառումներ են ձեռնարկվում:

Համալսարանում գործում է ՇՊՀ-ի ակադեմիական խորհրդատվությունների կառավարման աշխատակարգը, որտեղ տրվում է խորհրդատվական պարապմունքների նկարագրությունը, նպատակները և ժամանակացույցը:

Ուսումնառողներին՝ վարչական կազմի կողմից հավելյալ օժանդակման և ուղղորդման գործընթացները կարգավորվում են ըստ «ՇՊՀ-ի ուսանողների կարիքների բացահայտման, օժանդակման և ուղղորդման» կարգի:

Ուսումնառողների կարիերային նպաստող գործունեություն ծավալում է Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժինը:

Համալսարանի համար գերակա գիտահետազոտական աշխատանքներում ուսումնառողների մասնակցության ապահովման համար գործում է «ՇՊՀ հիմնադրամի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման» կարգը:

Ուսումնառողների իրավունքները և պարտականությունները գլխավորապես արտացոլված են «ՇՊՀ-ի ներքին կարգապահական կանոնները. կանոնակարգ» փաստաթղթում, ինչպես նաև կրեդիտային համակարգով ուսումնառության կարգում և այլ իրավական ակտերում:

Ուսանողական խորհրդի գործունեությունը կանոնակարգվում է կանոնադրությամբ:

Ուսումնառողների իրավունքներով, բողոքներով և բողոքարկումներով զբաղվում է ուսանողական խորհուրդը և Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժինը:

Համալսարանում գործող ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների մատուցման գնահատման և որակի ապահովման համար գործում են մի շարք մեխանիզմներ (հարցումներ, զրույցներ, մշտադիտարկում և այլն):

5) ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականությունն ու ընթացակարգերը հաստատվում են Գիտական խորհրդի կողմից:

Դասավանդողների խրախուսման համար ներդրվել է «ՇՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի պարբերաբար գնահատման և վարկանիշավորման» կարգը

Մասնագիտության կրթական ծրագրի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները արտացոլվում են ՄԿԾ-ի

մասնագրերում, որը կարող է վերանայվել ըստ անհրաժեշտության ժամանակի պահանջներին համապատասխան:

Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման համար իրականացվում են հարցումներ, ուսումնասիրվում փաստաթղթային հիմքերը:

Ապահովվում է հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի կայունությունը և ըստ անհրաժեշտության համալրվում համատեղությամբ աշխատող դասավանդողներով:

Խրախուսվում է պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացը:

Վարչական աշխատակազմի հաստիքացուցակը՝ ըստ հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների հաստատվում է Հոգաբարձուների խորհրդի կողմից:

6) Հ Ե Տ Ա Ջ Ո Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը Ե Վ Ջ Ա Ր Գ Ա Ց Ո Ւ Մ Ը

Համալսարանի գիտահետազոտական կենտրոնի գործընթացի համակարգումն իրականացվում է Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի կողմից: Հետազոտական ոլորտում ռազմավարությունն արտացոլվում է Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրում, սակայն կարող է մշակվել և ներդրվել նաև առանձին ռազմավարություն կամ հայեցակարգ:

Հետազոտությունների հիմնական ուղղությունները տրվում են ամբիոնների կողմից:

Համալսարանում գործում է «ՇՊՀ հիմնադրամի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման» կարգը, ըստ որի պլանավորվում և իրականացվում են միջնաժամկետ ու կարճաժամկետ հետազոտական ծրագրեր, ներկայացվում են նաև հրապարակումների համար ներկայացվող պահանջներ: Այստեղ մեծ կարևորություն է տրվում այն հետազոտություններին, որոնք միտված են ու ներդրվում են ուսումնական գործընթացում:

Համալսարանում տպագրվում է ՇՊՀ-ի Գիտական տեղեկագիր հանդեսը, որի համար ներկայացված են հստակ պահանջներ և գործում են գրագողության դեմ պայքարի միջոցներ:

Ըստ համապատասխան կարգերի՝ խրախուսվում է հետազոտական գործունեության ծավալումը, ինչպես նաև ուսանողների ներգրավումն այդ գործընթացին՝ միաժամանակ առանձնակի կարևորելով միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումները, ինչպես նաև միջազգային գիտաժողովներին մասնակցությունը:

7) ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Համալսարանում ապահովվում է անհրաժեշտ ուսումնական միջավայր, առկա են բարեկարգ մասնաշենքեր, լաբորատորիաներ, արվեստանոցներ, արհեստանոցներ, որոնք բարելավվում են ըստ ռազմավարական նպատակների և առաջնահերթությունների:

Համալսարանում առկա է գրադարան, ընթերցասրահ՝ վերազինված համակարգիչներով:

Համալսարանն ունի պաշտոնական կայքէջ: Համալսարանի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը տարածվում է ինչպես պաշտոնական կայքէջի, այնպես էլ Facebook-ի, YouTube-ի, Twitter-ի, Instagram-ի, LinkedIn-ի պաշտոնական էջերում:

Բյուջեի բաշխումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա համար ըստ սահմանված կարգի: Իրականացվում են հետազոտություններ ռեսուրսներով բավարարվածության վերաբերյալ: Հետազոտությունների և հարցումների հիման վրա տեղի է ունենում ռեսուրսների վերաբաշխում և համալրում:

8) ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Համալսարանն ապահովում է գործընթացների թափանցիկությունն ու հասանելիությունը հասարակությանը:

Յուրաքանչյուր տարի հրապարակում է հաշվետվություն իր գործունեության մասին, որը ներառում է տեղեկություններ իրականացված ծրագրերի, ֆինանսական աղբյուրների, ուսումնական, գիտական և այլ գործընթացների վերաբերյալ: Այն հրապարակվում է պաշտոնական կայքէջում

Համալսարանի կենտրոնները, ֆակուլտետները, ամբիոնները և այլ ստորաբաժանումները հաշվետու են Գիտական խորհրդին և/կամ ֆակուլտետային խորհուրդներին: Վերջինս նաև հնարավորություն է տալիս իրականացնելու աշխատանքային պլանների կատարման գնահատում:

Համալսարանում գործում է Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնը, որն ապահովում է հասարակության հետ կապերը՝ կիրառելով հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

9) ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԳԱՅՆԱՑՈՒՄԸ

Արտաքին կապերի և միջազգայնացման ռազմավարությունը գլխավորապես արտահայտվում է Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրում, սակայն կարող է մշակվել և ներդրվել միջազգայնացման առանձին ռազմավարություն:

Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնն է զբաղվում արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացների համակարգմամբ և գործում է իր կանոնադրության համապատասխան:

Համալսարանն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների հետ:

Համալսարանն ապահովում է ուսանողների և աշխատակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ:

10) ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Որակի ապահովման գործընթացներում ներգրավված են ինչպես վարչական, ուսումնասօժանդակ ու ՊԴ կազմերը, այնպես էլ ուսանողները (գծապատկեր 1): Համալսարանում գործում է Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնը (գծապատկեր 2), հաստիքային և հասարակական աշխատակիցների գործառույթները սահմանվում են ըստ պաշտոնների նկարագրերի:


Որակի ապահովման գործընթացների իրականացման համար առկա են հույժ անհրաժեշտ տեխնիկական և նյութական միջոցները: Համալսարանում ապահովվում է համացանցի հասանելիություն, առկա են համակարգիչներով համալրված լսարաններ, ընթերցասրահ, որոնք ծառայեցվում են հարցումների իրականացման համար:

Որակի ապահովման գործընթացների իրականացման համար ֆինանսական միջոցների տրամադրումն իրականացվում է ըստ անհրաժեշտության՝ պայմանավորված առաջնահերթություններով:

Որակի ապահովման գործընթացներում ուսանողների, ՊԴ կազմի, շրջանավարտների և արտաքին գնահատողների ներգրավվածությունը հիմնականում արտացոլվում է էջ 8-9 ում նշված ձևերով:

Ուսանողների կարիքների վերհանումն ու դրանց օժանդակումն իրականացվում է ըստ «ՇՊՀ ուսանողների կարիքների բացահայտման, օժանդակման և ուղղորդման» կարգի: Դրանից զատ իրականացվում են հարցումներ և անցկացվում քննարկումներ: Դասախոսական կազմի կարիքները պարզաբանվում են ամբիոնների նիստերի, ինչպես քննարկումների և հարցումների միջոցով:

Դասավանդողների վերհանված կարիքները խորապես ուսումնասիրվում են և ձեռնարկվում միջոցառումներ ըստ առաջնահերթությունների:



Գծապատկեր 2. Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի հիերարխիկ կառուցվածքը / նարնջագույնով նշված են հաստիքացուցակով նախատեսված հաստիքները, իսկ դեղինով՝ ռեկտորի հրամանով հրամանագրվածները/

Համալսարանի փաստաթղթային ապահովումը և տեղեկատվական համակարգը ներառում են՝

1) Որակի ներքին ապահովման ձեռնարկը, որը պարունակում է.

- որակի ներքին ապահովման համակարգի ընդհանուր նկարագրությունը և կազմակերպական կառուցվածքը,
- որակի ապահովման քաղաքականության նպատակները, խնդիրները,
- որակի ապահովման սկզբունքները, գործառույթները, ընթացակարգերը և պատասխանատվությունների բաշխումը կառավարման տարբեր մակարդակների ու ստորաբաժանումների միջև, կապը և փոխազդեցությունը Համալսարանի կառավարման այլ մարմինների հետ,
- որակի ապահովման հիմնական գործընթացների համառոտ նկարագրությունը և որակի գնահատման սահմանված ընթացակարգերի փաթեթը,
- կանոնակարգեր և մեթոդական նյութեր՝ որակի ապահովման առանձին գործընթացների իրականացման վերաբերյալ,
- Համալսարանի կրթական չափորոշիչների ձևակերպումները,
- որակի ապահովման համակարգի կիրարկման համար անհրաժեշտ այլ նյութեր:

2) Որակի ապահովման տեղեկատվական համակարգն ընդգրկում է.

- Համալսարանի որակի ապահովման համակարգին առնչվող բոլոր պաշտոնական փաստաթղթերը՝ որակի ապահովման հայեցակարգ, որակի ապահովման ձեռնարկ, կրթական ծրագրերի, դասախոսական կազմի, սովորողների գնահատման և ուսումնառության ռեսուրսների որակի ու գնահատման հետ կապված փաստաթղթերը,
- որակի ապահովման գործընթացների իրականացման արդյունքների վերաբերյալ բոլոր հաշվետվությունները և զեկույցները,
- ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման համար պատրաստված ինքնագնահատման վերլուծական զեկույցները և հարակից փաստաթղթերը,
- տարբեր հարցումների և այլ միջոցառումների ձևաթերթերն ու արձանագրությունները,
- համակարգի տեղեկատվական ապահովմանը վերաբերող այլ նյութեր ու փաստաթղթեր:

Որակի շարունակական բարելավումը Համալսարանի որակի ապահովման քաղաքականության կարևորագույն բաղադրիչն է, որը կոչված է ապահովելու դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացների որակի շարունակական և կայուն բարելավումը՝ սովորողների և աշխատաշուկայի փոփոխվող պահանջմունքներին և կարիքներին համահունչ:

Միջոցները, որոնցով Համալսարանը ձգտում է ապահովել որակի շարունակական և կայուն բարձրացումը, էապես կախված են նրա պրոֆիլից, առաքելությունից, որակի ձևավորված մշակույթից, ռազմավարական նպատակներից, որակի ընտրված քաղաքականությունից:

Համալսարանը որակի շարունակական բարելավման և բարձրացման համատեքստում առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով.

1) որակի ապահովման գործընթացները կանոնակարգված են, մշտադիտարկվում են և պարբերաբար վերանայվում,

2) որակի ապահովման գործընթացները հիմնվում են որակի մշտադիտարկման գեկույցների, սովորողների, շրջանավարտների և գործատուների հետադարձ կապի և շրջանավարտների զբաղվածության վիճակագրական տվյալների վրա:

Համալսարանը որակի շարունակական բարձրացման մեխանիզմը հիմնված է շրջափուլային մի գործընթացի վրա, որը բաղկացած է հետևյալ չորս հիմնական փուլերից՝

1) **պլանավորում**. սահմանվում են հիմնական խնդիրները և չափելի ակնկալվող վերջնարդյունքները.


2) **իրականացում**. կատարվում են ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերմանը նպատակաուղղված բոլոր անհրաժեշտ գործողությունները և միջոցառումները.

3) **գնահատում**. ստուգվում, գնահատվում և չափվում են փաստացի ստացված արդյունքները սպասվածի համեմատությամբ, գնահատվում է այդ տարբերությունը.

4) **բարելավում**. մշակվում և պլանավորվում են լրացուցիչ միջոցառումներ՝ բացթողումները և թերացումները շտկելու և նախանշված վերջնարդյունքներն իրականացման հաջորդ փուլում ձեռք բերելու համար:

Որակի ներքին ապահովման համակարգը վերանայվում է ըստ հետևյալ սխեմայի.

Կենտրոնի գործունեության արդյունավետությունն ապահովվում է PDCA շրջափուլերով.



**Որոշ գործընթացներ կարող են ներկայացվել խմբավորված տեսքով կամ բաց թողնվել*